

**«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐԱՏՈՒՄ ԳՅՈՒՂԻ N1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»**

ՊՈԱԿ-ի ՉԱՐԳԱՑՄԱՆ ԿՐԱԳԻՐ

2023-2028թթ



ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝

ՎԱՐԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Զարգացման ծրագրի բովանդակությունը

Նախաբան.....	3
1. Դպրոցի առաքելությունը.....	6
1.1 Բ ^օ նչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցի առաքելությունը.....	8
1.2 Բ ^օ նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար.....	9
1.3 Բ ^օ նչ ռեսուրսներ են անհրաժեշտ ծրագրի իրականացման համար.....	10
1.4 Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականները.....	11
1.5 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոնները.....	12
1.6 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոնները.....	13
2. Բրավիճակի վերլուծություն	
2.1.Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ.....	14
2.2. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան.....	14
2.3.Նախորդ 5 տարիների ընթացքում կատարված աշխատանքները.....	16
2.4. Հաջորդ 5 տարիների ընթացքում նախատեսվող աշխատանքները.....	18
2.5. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը, դրանց վարումը.....	21
2.6.Կառավարման և խորհրդակցական մարմինները.....	22
2.7. Աշակերտական համակազմը.....	29
2.8. Մանկավարժական համակազմը	31
2.9. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	35
2.10. Ուսուճնական միջավայրը.....	36
2.11. Կրթության որակը.....	38
2.12. Տեխնոլոգիաները և նորարարությունները	38
2.13. Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը.....	39
3. Դպրոցի զարգացման հիմնախնդիրները.....	46
3.1 Դպրոցի պատկերանիշ և նշանաբան.....	48
4. Դպրոցի գործունեության՝ առանձնացված յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները	49
5. Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակներն ու խնդիրները..	51
6. Սահմանված նպատակներին ու խնդիրներին համապատասխան գործողությունները	51
7. Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները	51
8. Ակնկալվող արդյունքները	67
9. Ծրագրի գնահատման չափանիշներն ու վերահսկողությունը	68
10. Եզրափակում	69

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՄ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35-Ն հրամանի պահանջներին համապատասխան

Նախաբան

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Դպրոցի զարգացման ծրագիրը պլանավորված գործողությունների ու ներդրումների միասնական համալիր է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների ու խնդիրների իրագործմանը:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո սկսվել են իրականացվել կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար:

Կրթության բարեփոխումները ժամանակատար գործընթաց է, որին հասնելու համար ուսումնական հաստատության մանկավարժական հանրույթից պահանջվում է լուրջ և նպատակաուղղված աշխատանք և ժամանակ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում պլանավորել դպրոցի զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների կտրվածքով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ միջնակարգ դպրոցի հիմնական առաքելությունը շրջանավարտներին որակյալ կրթություն և մասնագիտական կողմնորոշում ապահովելն է: Կրթությունը ժողովրդավարության անկյունաքարն է, և այն մեծ դեր ունի հասարակությունների և պետությունների ամրապնդման, մարդկանց կենսապայմանների բարելավման և աշխարհի երկրների կայուն զարգացման ապահովման գործում:

Ծրագրի իրատեսականությունն ու շարունակականությունը ապահովելու նպատակով ես կարևորում եմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս հիմնայուները, որոնք համարվում են կրթության վերափոխման հիմնարար սկզբունքները:

Դրանք են՝

- Սովորել իմանալու համար:
- Սովորել իրականացնելու համար:
- Սովորել լինելու համար:

- Սովորել միասին ապրելու համար:

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ Դպրոց/ զարգացման 2023-2028 թվականների զարգացման ծրագրը մշակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35-Ն հրամանի պահանջներին համապատասխան : Հաշվի են առնվել նաև դպրոցի տնօրենի ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216-Ն որոշման պահանջները:

Դպրոցի զարգացման ծրագրի մեթոդաբանական հիմքերն են՝

1. Դպրոցի ներքին գործունեության 2018-2022 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները
2. Դպրոցում առկա հիմնախնդիրները

Դպրոցի զարգացման ծրագրի իրավական հիմքերն են՝

1. «Կրթության մասին» ՀՀ օրենքը
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը
3. «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը
4. «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան»
5. «Լեզվի մասին» ՀՀ օրենքը
6. Կրթակարգ
7. «ՊՈԱԿ-ի մասին» ՀՀ օրենքը
8. «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվական զարգացման պետական ծրագրը»

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023- 2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված կրթական ինքնազարգացման ներուժը:

Սույն հեռանկարային ծրագրի հիման վրա պետք է կազմվեն տարեկան աշխատանքային պլանները:

ԴԶԾ կազմելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացնել դպրոցի առաքելությունը, իմանալ՝ ինչ է [ծրագիրը և պլանավորումը.](#)

[«Առաքելությունն»](#) այն է, ինչի իրականացմանը կոչված է տվյալ հաստատությունը: Այն ունի շարունակական բնույթ:

ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման հեռանկարային ուղղությունները, նպատակներն ու խնդիրները սահմանում է «Կրթության զարգացման պետական ծրագիրը»:

Ծրագրի հիմնամեխը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, որոնք պետք է նպաստեն սովորողի ներդաշնակ զարգացմանը, կարողունակ քաղաքացու ձևավորմանը, ով կունենա ազգային արժանապատվության խոր գիտակցություն, ազգային արժեքների արժևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն, կկարողանա ինտեգրվել սոցիումին ու կունենա իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում:

- Դպրոցի գործունեության պլանավորման գործընթացը սովորաբար բաժանվում է հետևյալ փուլերի՝
- ա/ դպրոցի զարգացման հիմնական ուղղությունների, դրանց համապատասխան ծրագրի նպատակների և խնդիրների սահմանում,
 - բ/ ծրագրի իրականացման համար առկա հնարավորությունների, կադրային և այլ անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում-գնահատում,
 - գ/ ծրագրի իրականացումն ապահովող գործողությունների նախատեսում:
 - «ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման ծրագրի մշակման համար կատարված են հետևյալ հաջորդական քայլերը՝
- ա/ սահմանվել է դպրոցի առաքելությունը,
 - բ/ վերլուծվել է առկա իրավիճակը, բացահայտվել են եղած հիմնախնդիրները,
 - գ/ սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները,
 - դ/ սահմանվել են հիմնական գերակայությունները, մշակվել կատարման համար անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները, ժամանակացույցը
 - ե/ սահմանվել են հիմնական ռազմավարությունները, գնահատվել առկա և անհրաժեշտ մարդկային և նյութական միջոցները,

1. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի առաքելությունը իր սովորողների համար ազգային հենքի վրա հիմնական որակյալ կրթություն ապահովելն է՝ նպաստելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորմանը: Ժամանակակից աշխարհում հանրակրթության ոլորտում կարևոր են դառնում ստեղծագործելու ունակությունը, քննադատական մտածելակերպը, թիմային աշխատանքը, բարդ խնդիրներին հնարավոր լուծումներ տալը:

21-րդ դարի կոմպետենտ (կարողունակ) քաղաքացին պետք է խորը գիտելիքներով, զարգացած կարողունակություններով, մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ, սոցիումին ինտեգրված, նպատակասլաց ու հայրենասեր լինի:

Կրթությունն անընդհատ վերափոխվում է, բովանդակությունը՝ կատարելագործվում՝ մոտենալով արդի դարաշրջանի սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: Ճգնաժամային երևույթների հաղթահարումը և առաջխաղացումը կրթության բնագավառում տեղի են ունենում հնի վերափոխման, նոր սկզբունքային մոտեցումների դրսևորման, ինչպես նաև մանկավարժությանն ու կրթությանն այլ բովանդակություն հաղորդելու միջոցով: Մեծ տեղ է հատկացվում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը կրթության բնագավառում:

Ժամանակակից դպրոցից պահանջվում է.

1. Ձևավորել սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ:

2. Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ:

3. Կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը,

որ սովորողը կարողանա ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել:

4. Երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունա-վետության բարձրացման միջոցի: Սովորողին պետք է ընձեռել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն:

5. Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար,

6. Ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողունակություն:

7. Նպաստել սովորողների հաղորդակցական կարողունակությունների ձևավորմանը: Այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողունակություններ:

8. Հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոցի հեղինակության շարունակական բարձրացումը, բարեփոխումների նկատմամբ և դպրոցի մանկավարժական կոլեկտիվի ուժերի նկատմամբ վստահությունը այս հնգամյակում դպրոցի առաքելության բաղկացուցիչներից մեկն են համարում , քանի որ և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես որակյալ կրթությունը և դաստիարակությունը, շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք, և սոցիալ- տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Վճռորոշ են համարում դպրոցում առկա, ստեղծագործական կարողություններով օժտված մանկավարժական կադրերի աշխատանքի խթանումը, ընթացիկ վերապատրաստումները, հզոր ներուժով երիտասարդ ուսուցիչների ներգրավումը ուսումնադաստիարակչական աշխատանքներում:

Այս և նմանատիպ այլ առաքելությունների իրականացման ճանապարհին կարևոր է կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: Արդի դարաշրջանը պահանջում է արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Իսկ այդ փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ ենք ընդունում զարգացման ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում: Շատ կարևոր է սահուն կերպով անցնել ուսուցման «Հիբրդ» մեթոդին, որը հնարավորություն է տալիս կարծրացած ավանդականը դարձնել առավել հետաքրքիր՝ միաձուլելով հեռավար ուսուցման հետ:

Իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են.

ա/ ապահովելու որակյալ կրթություն

բ/ բարձրացնելու հանրակրթության արդյունավետությունը

գ/կրթությունը դարձնելու արդիական և համապատասխանեցնելու զարգացման պետական և միջազգային միտումներին:

ՀՀ հանրակրթության մասին օրենքը սահմանում է.

«Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը»:

Կրթությունը հասարակության յուրաքանչյուր անդամի համար անհատական նշանակություն ունի, ուստի մշտապես նոր գաղափարների անհրաժեշտություն է առաջանում:

Կրթական համակարգում որակական բարձր մակարդակը կարող է երաշխավորվել դպրոցի առաքելությունից բխող նպատակներով:

*կրթության որակի բարելավում

*սովորողների արժեքային համակարգի ձևավորում

*նյութատեխնիկական բազայի հարստացում

*համագործակցություն

Առաջադրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել առնվազն երկու

կարևոր խնդիր:

Առաջին՝ Ամենուր տեսնել և արդյունավետ օգտագործել ժամանակը, մարդկային ռեսուրսը և նյութական միջոցները:

Երկրորդ՝ Ստեղծել և արդյունավետ օգտագործել աշխատանքի առավել նպաստավոր պայմաններ:

/ Կրթական համակարգում նպատակների իրականացումը երաշխավորվում է ռազմավարական պլանավորմամբ/

- Կարճ ժամանակահատվածում հասնել էական հաջողությունների
- Բարենպաստ ուսումնական միջավայրի և անհրաժեշտ ռեսուրսների ստեղծում, ձեռքբերում և զարգացում:
- Կրթության որակի բարձրացման համար կազմակերպչական համապատասխան պայմանների և նյութատեխնիկական անհրաժեշտ բազայի առկայություն:
- Դպրոցի ներքին կարգապահական կառուցվածքի պահանջների իրականացում և կառավարման ու գործադիր մարմինների սերտ համագործակցություն:
- Ըստ լիազորությունների՝ աջակցություն ուսուցիչների որակավորման գործընթացին: Դպրոցում դասավանդող ուսուցիչների վերապատրաստումներ, մասնակցություն կամավոր ատեստավորման, նոր մեթոդների ինտեգրում, դասի ստեղծագործական ձևերի, միջոցների կիրառում:
- Տարբեր առարկաների դասաժամերին օգտագործվող ուսումնադիտողական պարագաների, պաստառների, սխեմաների ձեռքբերում և ըստ թեմաների դասակարգում:
- Երեխաների ֆիզիկական դաստիարակությունն հնարավորինս լավ կազմակերպելու համար՝ փնտրել և գտնել միջոցներ մարզագույքով կահավորելու համար:
- Մանկավարժների մասնագիտական իրազեկության զարգացումն ապահովելու նպատակով դպրոցում ստեղծել «Ուսումնական որակի» հանձնաժողով:

1.1Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցի առաքելությունը

Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել

- համակողմանիորեն զարգացած,
- մասնագիտորեն կողմնորոշված,
- ազգային արժեքներ կրող,
- հայրենասեր,
- գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ,

- աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ,
- մարդասիրության ոգով դաստիարակված կոմպետենտ քաղաքացիներ:

Այսպիսով՝ դպրոցի առաքելությունը պետք է բավարարի սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները:

1.2Ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար

- 1.Դպրոցի կրթական գործընթացի զարգացում պետության կրթական քաղաքականության միտումներին համահունչ:
- 2.Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի վարկանիշ:
- 3.Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որակյալ կրթություն ստանալու համար:
- 4.Սովորողի կրթական կարիքի գնահատում:
- 5.Սովորողի կրթական կարիքի բավարարում տարբերակված ուսուցմամբ:
- 6.Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ սովորական, և՛ օժտված, և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:
- 7.Սովորողների տեղեկացվածությունը հայաստանյան և համաշխարհային աշխատաշուկային:
- 8.Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝ դպրոց-ծնողական համայնք սերտ համագործակցությամբ:
- 9.Աշակերտների մտավոր զարգացման պայմաններ:
- 10.Սովորողների արժեհամակարգի ձևավորում՝ ունենալով ավանդույթներով հարուստ բազմամյա պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի և հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ:

1.3Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ Ծրագրի իրականացման համար

Մարդկային ռեսուրսներ

- Առկա մասնագետների մասնագիտական որակների շարունակական բարելավում

Նյութատեխնիկական բազա

- Համակարգչային տեխնիկայի համալրում
- Ժամանակակից սարքերի և սարքավորումների ձեռքբերում
- Էլեկտրոնային կրթական ռեսուրսների շարունակական համալրում և դասապրոցեսում վերջիններիս կիրառման ընդլայնում

1.4 Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականները

Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝

- Փորձառու մանկավարժական համակազմը,
- Մասնակցային և համագործակցային աշխատանքը,
- Համընդհանուր ներառական կրթության իրականացումը,

- Կրթության որակի բարելավմանը միտված շարունակական, միջոցառումները՝ սեմինարներ, վեբինարներ, վերապատրաստումներ,

- Կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը,
- Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում,

- Արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն),
- Դպրոցում ձևավորված ավանդույթները,
- Խրախուսման միջոցները («Տարվա աշակերտ», «Տարվա ուսուցիչ» անվանակարգերը, շնորհակալագրեր՝ դպրոցը լավագույնս ներկայացնելու համար, շնորհակալագրեր հայրենիքի պաշտպանությանը մասնակցած շրջանավարտներին՝ դպրոցի սերմանած հայրենասիրական դաստիարակությանը հավատարիմ մնալու և հայրենիքի հանդեպ պարտքը պատվով կատարելու համար),
- Սովորողների մասնակցությունը միջազգային և հանրապետական մրցույթներին:

1.5 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոնները

Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոններն են՝

Դրական

- առաքելության իրագործման գործընթացում կրթական գործընթացի մասնակիցների (ծնողական համայնք, կառավարման, ղեկավարման մարմիններ, համայնքի, հասարակության ակտիվ խմբեր)՝ ակտիվ ներգրավումը
- մարդկային, նյութական, ժամանակային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը
- արդյունավետ ղեկավարումը

Բացասական

- կրթական գործընթացի մասնակիցների իներտ, պասիվ վերաբերմունքը
- առաքելության նկատմամբ թերահավատությունը
- վարչական և մանկավարժական աշխատողների կազմակերպչական հմտությունների պակասը

Թվարկված ռիսկերը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝

- բոլոր հնարավոր ռիսկերի կանխատեսում և գնահատում,
- ռիսկերի կառավարման գործողությունների ճիշտ պլանավորում,
- գործողությունների համակարգված իրականացում:

1.6 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոնները

Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոններն են՝

Դրական

- Պետության կրթական քաղաքականության կրթության որակի բարձրացմանը միտված նորարարական և արդյունավետ մոտեցումների ներդրումը:
- Երկրի տնտեսական աճով պայմանավորված կրթության գծով պետական ֆինանսավորման չափաքանակի ավելացումը:
- Համայնքի կրթության որակի բարձրացմանն ուղղված գործողությունների կարևորումը և ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը դպրոցի կրթական գործընթացի կազմակերպմանը:
- Լիազորված մարմինների կողմից դպրոցին տարբեր ծրագրերում ներգրավելը:
- Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Բացասական

- դրական գործոնների բացակայությունը կամ ոչ լիարժեք առկայությունը
- համաճարակներով պայմանավորված սահմանափակումները
- հասարակության մեջ դպրոցի նկատմամբ ձևավորված կարծրատիպերը

2. Իրավիճակի վերլուծությունը

2.1 ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական միջնակարգ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

1. Դպրոցը հանդիսանում է «ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ (պետոեգիստրի վկայականի գրանցման համարը 70.210.00888, վկայականի համարը 03Ա-055197, ծածկագիր 10007948):

2. Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված 25.10.2017 թվականին, գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի կողմից:

3. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Նորատուս, Խ.Աբովյան-6, հեռախոս 093-24-94-00:

4. Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր:

5. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

2.2 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՆՅՈՒԹԱՏԵՒՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Դպրոցը հիմնվել է 1969 թվականին՝ որպես միջնակարգ դպրոց: Շենքը տիպային է, նախագծային հզորությունը՝ 964 աշակերտ – տեղ:

2006 թվականին Դպրոցը մասամբ վերանորոգվել է պետական բյուջեի միջոցների հաշվին:

Առկա դպրոցը բաղկացած է 2 մասնաշենքից և կից կառույցից:

Մասնաշենքերը եռահարկ և երկհարկ են:

Դպրոցում՝

- Դասարանների թիվը 2022-2023 ուստարում-15
- Դպրոցն իրականացնում է կրթական ծրագրերը՝ 513 աշակերտ տեղ հզորությամբ
- 2022-2023 ուստարում սովորողների թիվը -327
- Տարրական ընդհանուր- 169 սահմանային տեղով
- Հիմնական ընդհանուր- 238 սահմանային տեղով
- Ավագ ընդհանուր- 106 սահմանային տեղով

Դպրոցում աշխատող 44 մանկավարժներից 41-ը ունեն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում:

- Ուսուցչի միջին դրույքաչափը 126470 ՀՀ դրամ

Կառավարման խորհուրդը կազմված է 9 անձից:

Մանկավարժական խորհուրդ՝ 45 անձ

Ծնողական խորհուրդ՝ 15 անձ

Աշակերտական խորհուրդ՝ 8 անձ

Խորհրդակցական մարմիններն
ունեն կանոնադրություն,
աշխատանքային պլաններ, գործում
են օրենքով նախատեսված իրենց
իրավասությունների
սահմաններում:

Դպրոցն ունի՝

1 գրադարան՝ ավելի քան 4200 կտոր գրականությամբ

1 կաթսայատուն

1 Մարզադահլիճ

1 Թանգարան

Յլաբորատորիա/ֆիզիկա,

կենսաբանություն-քիմիա/

1 հանդիսությունների դահլիճ

1 պահակակետ

Առարկայական 5 դասասենյակ- ՆՁՊ, Շախմատ, «Արմաթ» ինժեներական
լաբորատորիա, ՏՀՏ և «Տեխնոլոգիա» կաբինետներ

1 մարզահրապարակ

8 սանհանգույց

1 ճաշարան՝ վերանորոգված

1 բուժկետ

1 արհեստանոց

Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով:

2,3 Նախորդ 5 տարիների ընթացքում կատարված աշխատանքները

Ոլորտը	Իրականացված աշխատանքը
	<p>Մասնակի բարեկարգվել է բակը՝ մի հատվածը ասֆալտապատվել է, փոփոխվել են դպրոցի տարածքի ցանկապատները</p> <p>Հիմնվել է Նորատուս գյուղի պատմության թանգարան</p> <p>Վերանորոգվել է ճաշարանը և համալրվել է սպասքով , գույքով և սարքավորումներով</p> <p>Խմելու ջրի և կոյուղու անցկացումից հետո շահագործվում են սանհանգույցները և ճաշարանը</p>
Դպրոցի շենքային պայմաններ	Դպրոցի շենքերի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը: Բոլոր դասասենյակ- ները կահավորված են բավականին լավ վիճակում գտնվող, բայց օգտագործված գույքով:
Նյութատեխնիկական բազա ուսումնական նյութեր	<p>Դպրոցն ունի 6 համակարգիչ, 11 նոութբուք, 1 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, 2 պրոեկտոր, 3 հատ պատճենահանող սարք</p> <p>Ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներում առկա են սարքեր ու սարքավորումներ/ ոչ բավարար քանակով/ : Առկա են նաև ուսումնական նյութեր, դիդակտիկ պարագաներ , աշխարհագրության և պատմության քարտեզներ, գլոբուսներ և այլն:</p>
	Գործում է անվտանգության համակարգ ՆՁՊ կաբինետում:
Դպրոցի առաջընթացը	
<p>Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովման և լուսաբանման նպատակով գործում է դպրոցի պաշտոնական կայքը՝ https://www.facebook.com/profile.php?id=100057550356940, https://noratus1.schoolsite.am/, noratus1@schools.am</p>	
	Դպրոցի 44 մանկավարժներից 41-ը ունեն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում

<p>Մանկավարժական համակազմի ձեռքբերումներ</p>	<p>Բոլոր ուսուցիչներն անցել են համապատասխան վերապատրաստումներ և ատեստավորված են, համապատասխանում են միջնակարգ դպրոցում դասավանդելու չափանիշներին</p> <p>4 ուսուցիչ ունի որակավորման 1-ին աստիճանի տարակարգ</p> <p>1 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորման և վաստակել 30% հավելավճարի իրավունք</p>
<p>Աջակցություն մանկավարժներին</p>	<ul style="list-style-type: none"> • ՏՀՏ կարողությունների և հմտությունների զարգացում • Էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործում՝ e-school.am, armedu.am, lib.armedu.am, kznakhimnadram. dasaran.am, imdproc.am, • Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում
<p>Ժողովրդավարական սկզբունքների կարևորում</p>	<ul style="list-style-type: none"> • Ձևավորված են և ակտիվորեն գործում են աշակերտական խորհուրդն ու ծնողական խորհուրդը, որոնք սերտորեն համագործակցում են տնօրենության և մանկավարժական համակազմի հետ: • ԱԽ-ն հանդես է գալիս նախաձեռնություններով, անցկացնում ինքնուրույն միջոցառումներ, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին, անկաշկանդ ներկայացնում և քննարկում է իր պլանները տնօրենի հետ:
<p>Դպրոցի համագործակցային դաշտ</p>	<p>Դպրոցը համագործակցել և համագործակցում է՝</p> <ul style="list-style-type: none"> *ԳՊՀ -ի և ԵՊՀ-ի հետ /ճանաչողական այցեր, առարկայական օլիմպիադաներ, սահիկահանդեսներ/ *Համայնքում գործող ուսումնական / Նորատուս գյուղի N2 և Նորատուս գյուղի N3 դպրոցներ/ նախադպրոցական / Նորատուս գյուղի N1 և Նորատուս գյուղի N2 մանկապարտեզներ/ հաստատությունների, հասարակական կառույցների հետ *Մասնագիտական կողմնորոշման ռեսուրս- կենտրոն *Գավառի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ * Համայնք (ակտիվորեն մասնակցում է Նորատուս համայնքի կողմից կազմակերպված միջոցառումներին, կազմակերպում է ավանդական միջոցառումներ, տոներ, ծեսեր՝ ներգրավելով համայնքի բնակչությանը) <p>Մասնակցություն «Կենգուրու» միջազգային և «Մեղու» հանրապետական մրցույթներին</p>

Դպրոցի ակտիվություն	ամենամյա ասմունքի փառատոնին, շարադրությունների, տեսանյութերի և ստեղծագործական այլ մրցույթներին և այլն:
	Մշակութային և սոցիալական բնույթի ճանաչողական էքսկուրսիաներ, արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներ՝ գրական-երաժշտական կոմպոզիցիաներ, գրույց-քննարկումներ, բանավեճեր, այցելություններ թանգարաններ և թատրոններ:
	Հիշատակի և խոնարհման երթեր՝ Ծիծեռնակաբերդ, Հաղթանակ զբոսայգի, Նորատուսի զինվորական պանթեոն և Հայրենական մեծ պատերազմի հուշարձան:
Դպրոցում ձևավորված ավանդույթներ	Ամենամյա տարեվերջյան եռակողմ նիստ՝ դպրոց-ծնող-աշակերտ, որի ժամանակ տնօրենը տալիս է տվյալ ուստարվա հաշվետվությունը, տվյալ ուսումնական տարվա առավել ակտիվ ուսուցիչները, ծնողներն ու աշակերտները խրախուսվում են դպրոցի տնօրենի շնորհակալագրերով ու պատվոգրերով:

2.4 Հաջորդ 5 տարիների ընթացքում նախատեսվող աշխատանքներ.

Ոլորտը	Դպրոցի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը նպաստող և զարգացման ենթակա գործոններ	
Դպրոցի շենքային	Հետևողական լինել դպրոցի երկրորդ մասնաշենքի պատուհանների վերանորոգման և գույքի ձեռքբերման գործընթացին	
	Սովորողների մոտիվացիայի և նպատակադրման, ներդպրոցական	Առարկայական կաբինետների, դասասենյակների համալրում նոր գույքով:
		Համակարգչային լսարանի կահավորում, համակարգչային տեխնիկայի համալրում, էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերում:
	Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաների համար ուսումնական նյութերի և սարքավորումների ձեռքբերում	

<p>պայմաններ և նյութատեխնիկական բազա</p>	<p>կյանքի ակտիվացման համար</p>	<p>Դպրոցի հանդիսությունների դահլիճի հարդարում/ այն վերանորոգված է/ :</p>
	<p>անհրաժեշտ պայմանների ապահովում</p>	<p>Գրադարանին կից ստեղծել համակարգիչներով կահավորված լսարան, որտեղ տեղադրված համակարգիչներից դասերից հետո կօգտվեն այն սովորողներն ու ուսուցիչները, որոնք տանը չունեն համակարգչով աշխատելու հնարավորություն</p> <p>Կահավորել աշակերտական խորհրդի սենյակը</p> <p>Կահավորել ժամանակակից գրադարան:</p> <p>Ձևավորել հոգաբարձուների խորհուրդ և շրջանավարտների խորհուրդ :</p>
<p>Քաղաքացու ձևավորում, ուսումնական գործընթաց</p>		<p>SՀS կարողությունների զարգացում, էլեկտրոնային ռեսուրսների ընդլայնում</p> <p>Ժամանակակից կրթական մոտեցումների ու տեխնոլոգիաների խթանում, զարգացում</p> <p>Ժամանակակից մեթոդական գրականության ձեռքբերում</p> <p>Ներդպրոցական վերահսկողության դրույթների թարմացում, ուժեղացում, նոր փաթեթների, ձևաթղթերի, փաստաթղթերի ներդրում` դպրոցի կանոնադրությանն ու այլ իրավական ակտերին համապատասխան:</p>
<p>Կադրային քաղաքականություն</p>		<p>Ուսուցիչների վերապատրաստումներ, կամավոր ատեստավորման գործընթացի խթանում, ուսուցչի օգնականների աշխատանքի արժևորում, մենթորական աջակցություն:</p>

Խորհրդակցական
մարմիններ

Շրջանավարտների խորհրդի ստեղծում
Հոգաբարձուների խորհրդի ստեղծում

2,5 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը, դրանց վարումը

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝ «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, «ՀՀ աշխատանքային օրենսգրքով», դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն):

Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով:

Դպրոցի գործունեության փաստաթղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնայինի:

Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու նպատակով:

Ուսումնական հաստատությունը պետք է ունենա իրավական համակարգի զարգացման հնարավորություն, իր գործունեության համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի ցանկը և ցանկում նշված բոլոր փաստաթղթերը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը՝

1. Աշակերտի անձնական գործ
2. Աշակերտական շարժի մատյան
3. Ատեստատների բաշխման մատյան
4. Վկայականների բաշխման մատյան
5. Աշխատողների հրամանագիրք
6. Աշակերտների հրամանագիրք
7. Աշխատողի անձնական գործ
8. Դպրոցի խորհրդի արձանագրությունների մատյան
9. Մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյան
10. Առարկայական մասնախմբերի արձանագրությունների մատյան
11. Տարիֆիկացիոն ձևաթղթերի մատյան
12. Ուսուցչի բաց թողած/փոխարինած ժամերի հաշվառման մատյան
13. Աշակերտական խորհրդի արձանագրությունների մատյան
14. Սովորողի տեղափոխման թերթիկ

Ամենօրյա գործունեությունը կանոնակարգելու նպատակով դպրոցն իր իրավասության սահմաններում կարող է մշակել, օգտագործել կանոնակարգող այլ փաստաթղթեր:

Ուստի նպատակ ենք սահմանում ապահովել ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերի համապատասխանությունը դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին:

2.6 Կառավարման և խորհրդակցական մարմիններ

1. Դպրոցն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ, որի լիազորությունները սահմանվում են օրենքով և կանոնադրությամբ:

Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները՝ նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ:

2. Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման համար ձևավորված են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ:

Դպրոցի խորհուրդ

Տնօրեն

Տնօրենի տեղակալներ

Գլխավոր հաշվապահ

Խորհրդակցական մարմին

Ուսումնական
աշխատանքի
գծով

ՄԿԱ

ԴԱԿ

Մանկ.
Խորհ.

ՄՄ

ԱԽ

ԾԽ

Տեխնիկական
աշխատողներ

Հայոց լեզու և
գրականություն

Ֆիզմաթ

Օտար լեզու
(անգլերեն և ռուսերեն)

Կենսաքիմիա

Պատմաաշխարհագրական

Ընդհանուր զարգացման
առարկաներ

Տարրական կրթություն մ/մ

Անհրաժեշտ է ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար՝ պահպանելով նրանց իրավունքներն ու պարտականությունները:

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության համաձայն:

Ա) Կուլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները՝ հետևյալ ուղղություններով.

- նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,
- դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- դպրոցական շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում,

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրությամբ ամրագրված է. «Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ»: Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են սովյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը:

Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները:

բ) Ծնողական խորհուրդ

Անհնար է պատկերացնել հզոր դպրոցական համայնք՝ առանց այդ համայնքի կայացման ու զարգացման գործում ծնողների ակտիվ մասնակցության ու ներդրման: Ծնողը երեխայի ուսման, դաստիարակության ու զարգացման գործում դպրոցի առաջին համագործակիցն է: Պետք է ներգրավել ծնողներին երեխաների հետ աշխատանքում: Մեծ է ծնողի դերն ու անելիքը երեխայի կրթության ու զարգացման ճանապարհին: Ծնողները մասնագիտական կարծիքի տեսքով, անհատապես կամ խմբով, կարող են աջակցել դպրոցի ներքին կազմակերպչական գործընթացների և այլ բովանդակային հարցերի շուրջ տարբեր որոշումների կայացմանը: Ծնողները ներհամայնքային միջոցառումների կազմակերպման մասնակից են: Նրանք նույնպես երբեմն կարող են հանդես գալ կրթական, հասարակական ու ժամանցային զանազան միջոցառումների ու նախաձեռնությունների առաջարկներով, իրենց օրինակով և կազմակերպած բարի գործերով լավագույն օրինակը լինել երեխաների համար: Ծնողական խորհրդի հետ համագործակցության բարելավումը մեր ամենօրյա աշխատանքի հիմքում է:

Արդյունքում՝ ամրապնդվում է ձեռք բերած փոխադարձ վստահությունը և հարգանքը, ծնող և դպրոց կապը: Ծնողը պետք է զգա, որ ինքը ունի հնարավորություն նպաստելու երեխաների կրթությանը իր իրավասությունների սահմաններում: Պետք է այնպես աշխատել, որ ծնողները շահագրգռված լինեն որակյալ կրթությամբ և այդ կրթության համար անհրաժեշտ պայմանների առկայությամբ:

Անհրաժեշտ է՝

1. Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառնություններում:
2. Ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջներ ձևավորել:
3. Ամրապնդել ծնողական խորհրդի կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը:
4. Աջակցել ծնողական խորհրդի աշխատանքի կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բնագավառում: Այդ նպատակով ճշտել՝
 - ✓ դպրոց հաճախող աշակերտների թիվը, որոնք հաշվառված են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում
 - ✓ երկկողմանի ծնողագուրկ աշակերտների թիվը

- ✓ միակողմանի ծնողագուրկ աշակերտների թիվը
- ✓ գոհված ազատամարտիկների երեխաների թիվը
- ✓ հաշմանդամ աշակերտների վերաբերյալ տեղեկատվությունը
- ✓ նյութապես անապահով սովորողների կազմը
- ✓ ծնողական խնամքից զրկված աշակերտների թիվը
- ✓ միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների մասին տվյալները
- ✓ աշակերտների թիվը , որոնց ծնողները հաշմանդամ են
- ✓ աշակերտների թիվը, որոնք դասերին չեն հաճախում վարձու աշխատանք իրականացնելու պատճառով
- ✓ այն աշակերտների թիվը, որոնք անչափահաս են, սակայն ընդգրկված են որոշակի աշխատանքներում
- ✓ աշակերտների թիվը, որոնց ծնողները գտնվում են արտերկրում

5. Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը:

6. Ծնողներին պետք է մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնական նյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորներին:

7. Ծնողներին ներգրավել իրենց երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին, միջոցառումներին և այլն:

8. Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ. այդ նպատակով դպրոցում ստեղծել ոչ ֆորմալ կրթության իրականացման համար դասասենյակ, որտեղ գեղեցիկ ձևավորված անկյունում տեղադրված կլինի երեխայի դաստիարակության և դպրոցին ու կյանքին նախապատրաստելու հանրամատչելի գրականություն, այդ բնագավառի ամենաթարմ նորություններն ու խորհուրդները: Բոլոր ծնողները չէ, որ տիրապետում են երեխայի դաստիարակության և նախնական ուսուցման նորություններին և հատուկ մանկավարժական մեթոդներին: Նրանց օգնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցները՝

- ծանոթացնել երեխայի խնդրին
- միասին սահմանել խնդիրը
- միասին գտնել խնդիրը լուծելու ուղիները
- գնահատել սպասվող արդյունքները
- ընտրել և կիրառել խնդրի լուծման առավել խելացի տարբերակը
- գնահատել փաստացի արդյունքները

գ) Աշակերտական խորհուրդ

Աշակերտական խորհուրդները դպրոցում քաղաքացիական կրթության կարևորագույն տարրերն են: Դրանք հնարավորություն են տալիս ստեղծելու ինքնավար աշակերտական մարմին և ակտիվորեն մասնակցելու դպրոցի ժողովրդավարական կառավարմանը, համայնքի կյանքին: Տնօրենության դերը մեծ է ԱԽ-ների կայացման հարցում: Ուսումնասիրությունները փաստում են, որ այն դպրոցներում, որտեղ նրանք ստեղծել են բաց, ազատ ու թափանցիկ միջավայր և աջակցում են աշակերտներին, ԱԽ-ները հաջողություններ են գրանցում, իսկ դպրոցներում, որտեղ տնօրենները փորձում են ղեկավարության կցորդ դարձնել ԱԽ-ներին, դրանք չեն կարողանում ազատորեն գործել: Կարևոր է նաև ԱԽ-ների գործունեության ոլորտի ճշտումն ու աշակերտների կողմից իրենց իրավունքների գիտակցումը: ԱԽ օրինակելի կանոնադրության մեջ որպես ԱԽ իրավասությունների 1-ին կետ նշվում է, որ այս մարմինը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է դպրոցի խորհրդի ու մանկավարժական խորհրդի նիստերին՝ աշակերտներին վերաբերող ուսումնական հարցերի, արտադպրոցական ու արտադասարանային աշխատանքների կազմակերպմանը, աշակերտների կարգապահական հարցերի քննարկումներին, մասնակցում է համայնքային ծրագրերի իրականացմանը և առաջարկություններ ներկայացնում տնօրենությանը ներքին կարգապահության, հանգստի ու ժամանցի կազմակերպման, դպրոց-ընտանիք կապի ամրապնդման և այլ հարցերի վերաբերյալ: Աշակերտները պետք է սովորեն դպրոցի սահմաններից դուրս նայելու և համայնքի համար որևէ բան անելու մասին:

Աշակերտական խորհրդի հետ համագործակցության բարելավում

Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը: Նրանց մասնակից դարձնել դպրոցի շրջանակներում որոշումների կայացմանը, որպեսզի աշակերտները կարողանան ազատ արտահայտել իրենց կարծիքը:

1. ԱԽ հաշվետվությունները դարձնել կիսամյակային: Դրանք պետք է հանձնվեն ոչ միայն տնօրենին, այլ փակցվեն դպրոցի պատին եւ դրվեն դպրոցի ինտերնետային կայքում:

2. Անցկացնել աշակերտական խորհուրդների տարեկան համագումարներ, փորձի փոխանակման ու նոր գաղափարների համար:

3. Ավելի աշխուժացնել տարրական դասարանների երեխաների խնդիրներով զբաղվող ԱԽ անդամների աշխատանքը:

4. Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում: Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունները:

5. Աջակցել ԱԽ ծրագրերին և նախաձեռնություններին:

Այսպիսով ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունքների պաշտպանությունը:

դ) Հոգաբարձուների խորհրդի ձևավորում

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար մեծ դեր ունի հոգաբարձուների խորհուրդը:

- Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել հոգաբարձուների խորհուրդ:
- Խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների:
- Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը:
- Հոգաբարձուների խորհուրդը պետք է գտնի բարերարներ, ովքեր ներդրումներ և նվիրատվություններ կկատարեն:
- Գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ և մատչելի՝ բարերարի, դպրոցի և տեղական ինքնակառավարման ու պետական մարմինների համար:

ե) Շրջանավարտների խորհրդի ձևավորում

Շրջանավարտների խորհրդի ձևավորման նպատակներն են՝

- ամրապնդել դպրոցի և շրջանավարտների միջև շարունակական կապը
- նպաստել դպրոցում կրթական և գիտական ծրագրերի իրականացմանը
- քննարկել դպրոցի շրջանավարտներին հուզող հարցերը
- իրականացնել տեղեկատվության և փորձի փոխանակում:


Շրջանավարտների խորհրդի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- աշակերտների և ուսանողների համագործակցության խթանում, որը կարող է նպաստել մասնագիտական կողմնորոշմանը
- անհրաժեշտ պայմանների ստեղծում՝ շրջանավարտների, աշակերտների և ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացման նպատակով
- մի շարք տարբեր սեմինարների և դասընթացների միջոցով ուսանողների և շրջանավարտների ինքնահաստատմանն ուղղված ծրագրերի աջակցում

- շրջանավարտների տվյալների բազայի ստեղծում
- դպրոցական մրցումների, մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպում
- բարեգործական ծրագրերի մշակում և իրականացում:

2.7. Աշակերտական համակազմ

2022-2023 ուստարում դպրոցում սովորում է 329 աշակերտ: Նախորդ 2 տարիների համեմատ ավելացել է աշակերտ թիվը, այս ուստարում դպրոցում կոմպլեկտավորվել է 15 դասարան, դպրոց է ընդունվել 44 աշակերտ:



Ամուր է դպրոց-շրջանավարտ կապը, ինչը փաստում է, որ մեր սաները սիրում են դպրոցը, սիրով են հաճախում, իրենց զգում են հարգված, ապահով, գնահատում են դպրոցի տնօրենության և մանկավարժական համակազմի աշխատանքը, այդ մասին են վկայում նաև ներքին գնահատման շրջանակներում արված հարցումները:

Դպրոցը հատուկ ուշադրություն է դարձնում աշակերտների հաջողություններին դպրոցում և դպրոցից դուրս: Կարևորում է նրանց ձևավորումը՝ որպես անհատականություններ, որպես քաղաքացիներ, ցուցաբերում է անհատական մոտեցում բոլոր դաշտերում: Դպրոցը պարբերաբար տարբեր ձևաչափերով խրախուսում է շնորհալի, դպրոցասեր և ակտիվ աշակերտներին, հաշվի է առնում նրանց նախասիրությունները:

Դպրոցի աշակերտները հաջողությամբ մասնակցում են առարկայական օլիմպիադաների, տարբեր առարկայական մրցույթների («Մեղու», «Կենգուրու»), ստեղծագործական և սպորտային մրցույթների: Այդ ամենը լուսաբանվում է դպրոցի կայքէջերում:

Աշակերտները և ուսուցիչները մեկ միասնական համակարգ են, նրանց գործունեությունը՝ փոխկապակցված: Ուստի մեր նպատակը պետք է լինի

առաջին հերթին օգնել աշակերտին, որ կայանա որպես առաքինություններով օժտված լիարժեք անձ, ով իր արժեքային համակարգով ձգտում է ճանաչելու, համագործակցելու և ստեղծագործ մտքով արարելու:

➤ **Աշակերտներին** ընդունել ոչ միայն որպես մտավոր, այլև սոցիալական և հուզական (եմոցիոնալ) անհատականություններ՝ ըստ որի հաշվի առնել.

- նախնական գիտելիքները
- մտավոր զարգացումը
- մշակութային դաստիարակությունը
- զարգացվածությունը և զարգանալու հույսերը (սպասելիքները):

Մովորողների հաջողության հասնելու համար կարևոր ենք համարում հետևյալ հմտությունների ձևավորումն ու զարգացումը

- Ստեղծագործական մտածողությունը:
- Համագործակցությունը:
- Քննադատական մտածողությունը:
- Հաղորդակցությունը:
- Տեղեկատվական գրագիտությունը:
- Մեղիա գրագիտությունը:
- Տեխնիկական գրագիտությունը:
- Ճկունությունը:
- Լիդերությունը:
- Նախաձեռնողականությունը:
- Արդյունավետությունը:
- Սոցիալականությունը:

2.8 Մանկավարժական համակազմը

Մանկավարժական համակազմը համալրված է փորձառու և որակյալ կադրերով: Դպրոցում աշխատող 44 մանկավարժներից 41-ը ունեն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում:

Չորս ուսուցիչ ունեն որակավորման առաջին աստիճանի տարակարգ, մեկ ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորման և հաղթահարել անցողիկ շեմը 30%-ով: Ուսուցիչները համավարակի պայմաններում բարելավեցին իրենց կարողությունները տեղեկատվական տեխնոլոգիաների դաշտում և կարողացան պատշաճորեն


իրականացնել հեռավար ուսուցում: Այսօր էլ, ըստ անհրաժեշտության, իրականացնում են հիբրիդային ուսուցում, հմտորեն օգտվում են առկա էլեկտրոնային կրթական ռեսուրսներից, նաև իրենք են ստեղծում ռեսուրսներ:

Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթով՝ ըստ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի:


Կադրային քաղաքականությունը կրել և կրելու է շարունակական բնույթ, մանկավարժական համակազմը համալրվելու է նոր բարձրորակ կադրերով:

Ուսուցիչների դրույքաչափի միջին ցուցանիշը՝ 0,5 :

Դպրոցում գործում են հայոց լեզվի և գրականության, օտար լեզուների, ֆիզմաթի, պատմաշխարհագրական, կենսաքիմիա, ընդհանուր զարգացման և տարրական կրթություն առարկաների մեթոդավորումները՝ ըստ իրենց գործառույթների:



Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը



- **Ուսուցիչին** գնահատել ըստ նրա կրթության և փորձառության, ուսումնական գործընթացում ունեցած հաջողությունների, դպրոցի զարգացման գործում նրա ունեցած ներդրման:
- Գնահատման չափանիշները կարող են լինել.
 - ✓ Բարձրագույն մասնագիտական կրթությունը:
 - ✓ Աշխատանքային փորձը:
 - ✓ Ուսուցման գործընթացում ուսուցչի կողմից կիրառվող դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողունակություններ և հմտություններ:
 - ✓ Տիրապետում է գնահատման մեթոդաբանությանը և ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու հմտություններին :
 - ✓ Գիտի առարկայի չափորոշիչները և դասավանդելիս առաջնորդվում է չափորոշիչներով:

- ✓ Իր աշխատանքում պատասխանատու է և պարտաճանաչ, նպաստում է դպրոցի և վարչական աշխատանքների կազմակերպմանը:
- ✓ Տիրապետում է տարիքային հոգեբանությանը:
- ✓ Գիտի և հարգում է երեխայի իրավունքները:
- ✓ Պահպանում է մանկավարժական էթիկայի կանոնները:

Կրթության որակի բարձրացման հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին:

Դպրոցի մանկավարժական համակազմի բարելավումը համարում եմ դպրոցի ռազմավարություններից մեկը և նախատեսում եմ զարգացնել դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացը՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, պարզևատրման միջոցով խրախուսելու և աջակցելու համար:

2.9 Դպրոցի համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը. համատեղ շաբաթօրյակներ, ծառատունկ, տոնակատարություններ, հանդիպումներ և այլն: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես՝ ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր, նշանավոր մարդկանց հետ հանդիպումներ անցկացնելիս: Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի զարգացմանը և կարիքների հետազոտմանը: Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է նաև մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Ստորև ներկայացված գծապատկերում արտահայտվում է այդ համագործակցության տեսլականը:



Դպրոցը համագործակցում է նաև Նորատուս գյուղի և Գավառի տարածաշրջանի դպրոցների, «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի, ԳՊՀ-ի, ԵՊՀ-ի, Գավառի քաղաքային գրադարանի, Գավառի երկրագիտական թանգարանի, պատկերասրահի, Գավառի պետական թատրոնի, մշակույթի պալատի, Գավառի սպորտ դպրոցի, երաժշտական և արվեստի դպրոցների հետ:

2.10 Ուսումնական միջավայր

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և անձնային-մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, սովորողին կրթում և դաստիարակչական ազդեցություն գործում նրա վրա: Կրթական արդի միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ տալիս զուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ: Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումնական միջավայրը նաև դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և լրացուցիչ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ:

Դպրոցում պետք է ձևավորել հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և քաղաքացիական հասարակության գաղափարներին:

Ուսումնական միջավայրի հիմքում պետք է դնել հումանիզմը, որը հետապնդում ու խթանում է մարդասիրության և լավատեսության արմատավորումը, ինդիվիդների դրական լուծումը, վստահության ներշնչումը, մարդու մեջ բարձրացնում է պահանջկոտությունը ոչ միայն իր, այլև ուրիշների նկատմամբ: Դպրոցում չպետք է լինեն սովորողի նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքեր: Երեխաները ինչպես նաև նրանց ծնողները պետք է համոզված լինեն, որ դպրոցում իրենք պաշտպանված են, դպրոցում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ:

Ուսումնական առողջ միջավայրի ստեղծման անհրաժեշտ միջոցառումներն են.

- Մանկավարժական կոլեկտիվում մշտապես ապահովել բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ:

- Օգտագործել բոլոր հնարավոր ռեսուրսները դպրոցում քաղաքաշտպանության միջոցառումները պատշաճ կազմակերպելու համար:
- Ուսուցչին գնահատել ըստ նրա փորձառության, մասնագիտական և ստեղծագործական կարողությունների, ըստ արժանվույն սահմանել խրախուսման, պարգևատրման տարբեր ձևեր:
- Դպրոց-ընտանիք փոխհամագործակցությունն ամրապնդել երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորումով:
- Մտեղծել նյութական և սոցիալ-հոգեբանական այնպիսի պայմաններ, որոնք սովորողի և ուսուցչի մոտ կառաջացնեն անընդհատ սովորելու, աշխատելու, ինքնաարտահայտվելու պահանջ:
- Մշտական հոգածության առարկա դարձնել սովորողների առողջության պահպանումը, խստորեն վերահսկել բացակայությունները, ճշտել դրանց պատճառները, պահպանել սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կանոնները:
- Ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմքում դնել ազգային արժանապատվություն ունեցող հայ մարդու դաստիարակությունը, ով ճանաչում, ընդունում և հարգանքով է վերաբերվում շրջապատի մարդկանց, կարողանում է արժևորել հայ և համաշխարհային մշակույթը, գիտելիքը, ունի ազգային մտածողություն և ինքնագիտակցություն:

2.11 Կրթության որակ

Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին և անհատի կրթական կարիքներին:

Դպրոցի տարրական, միջին և ավագ տարիքային խմբերում կրթական գործընթացը կազմակերպվում է արդյունավետ ձևով, սակայն զարգացնելու և առաջընթաց ապահովելու անհրաժեշտություն կա: Անհրաժեշտ է զարգացնել համակարգչային գրագիտությունը, ինչը հնարավորություն կտա շրջանավարտներին դառնալ մրցունակ աշխատաշուկայում: Առաջընթացի ապահովմանն է ուղղված զարգացման ծրագրի գլխավոր նպատակի ու խնդիրների վերհանումն ու աստիճանաբար իրագործումը:

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով փոխելու հնարավորությունները: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները.

- Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը
- Կրթական գործընթացի կատարողականը
- Կրթական գործընթացի արդյունավետությունը
- Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում
- Կառուցողական դասերի որակը
- Ուսումնական միջոցառումների և էքսկուրսիաների որակական ազդեցությունը

2.12 Տեխնոլոգիաներ և նորարարություններ

Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները հասարակական կյանքի ամենակարևոր տարրերն են, իսկ գիտելիքն ու տեղեկությունը՝ առաջընթացի որոշիչ գործոն: Ուստի կրթական նոր տեխնոլոգիաների զարգացմամբ պետք է խթանել դասավանդման նոր մեթոդների և ուսուցման նոր ձևերի մշակումը: ՏՀՏ-ի միջոցով կատարելագործել դասավանդման որակը, բարձրացնել սովորողների առաջադիմությունը, կատարել գիտելիքների շարունակական նորացում: Միաժամանակ, սովորողների տետրերն ու գրիչները, գրքերը չփոխարինել համակարգչով, այն համարել լրացնելու գործիք ուսուցչի և

աշակերտի համար: Կարևորել «Imdproc.am», «Կտակ», - կրթական ինտերնետ կայքերը՝ որպես ռեսուրս՝ առաջադրանքների էլեկտրոնային շտեմարան և անսահման վարժանքների հարթակ դպրոցականների, մանկավարժների և ծնողների համար:

Կարևորելով S2S տեխնոլոգիաների ներդրումը դասապրոցեսում՝ դպրոցի ուսուցիչները պարբերաբար մասնակցում են առցանց վեբինարների և սեմինարների, բարելավում են հեռավար ուսուցման հմտությունները, դասապրոցեսում օգտագործում են էլեկտրոնային տարբեր կրթական ռեսուրսներ: Ուսուցման ընթացքում ուսուցիչները կիրառում են թիմային, խմբային աշխատանքներ, ուսուցման նախագծային մեթոդներ, շրջված դասարան մոդելը, պրոբլեմային ուսուցման տարրեր:

2.13 Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը

Աղյուսակ 1

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Դպրոցի շենքային պայմաններ	
<ul style="list-style-type: none"> • Մասամբ հիմնանորոգված շենք • Տարածքի ընդարձակությունը, դասասենյակների մեծությունը և լուսավորվածությունը • Ընդարձակ մարզահրապարակը 	<ul style="list-style-type: none"> • 2-րդ մասնաշենքի պատուհանների վերանորոգում • Նոր գույքի ձեռքբերում • Համակարգչային լսարանի, գրադարանի հանդիսությունների դահլիճի հարդարում • Ժամանակակից լաբորատոր սարքավորումների ձեռք բերում • Դպրոցի բակի ամբողջական ասֆալտապատում • Մարզագույքի համալրում
2. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր /դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր, դրանց վարումը/	

- Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ և էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգերի համաձայն
- ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին և վարվում են կանոնադրության պահանջներին համապատասխան
- Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողությունն անցկացնելու նպատակով

- Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների պասիվ մասնակցություն
- էլեկտրոնային գործիքակազմի համալրում

3. Աշխատակազմի գործունեության ուժեղ և թույլ կողմերը՝ տարանջատել վարչական և ուսուցչական կազմը

Վարչական կազմ

- Ղեկավարման բազմամյա փորձ ունեցող, աշխատանքում հետևողական, արհեստավարժ վարչական անձնակազմը
- Համագործակցային և թիմային աշխատանքի իրականացումը,
- Կառավարման ժողովրդավարական ոճը,
- Կադրային ճիշտ քաղաքականությունը,
- Բոլոր օղակների աշխատանքի համակարգվածությունը և վերահսկողությունը,
- Մանկավարժների բնականոն աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմը
- Նպատակաուղղված և արդյունավետ ներդրոցական վերահսկողությունը՝ միտված կրթության որակի ապահովմանը
- Համագործակցային և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը

Մանկավարժական կազմ

- Անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված մանկավարժ-մասնագետները
- Բարձր պատասխանատվությունը,
- Աշակերտակենտրոն մոտեցումները
- Սովորողի հաջողության կարևորումը և գնահատումը
- Մեթոդական միավորումների համակարգված աշխատանքը

- Կամավոր ատեստավորմանը մասնակցության պասիվություն
- Միջազգային գիտաժողովների մասնակցության բացակայություն
- Միջազգային մրցույթներին մասնակցության ցածր տոկոս
- Հանրապետական և միջազգային սեմինարներին, վեբինարներին ցածր մասնակցություն

<ul style="list-style-type: none"> • Մեթոդական սեմինարներ՝ միտված ուսուցման որակի բարձրացմանը • Մշտադիտարկումները և առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրությունները • Քաղաքացիական դաստիարակությունը. արժեհամակարգի, կարողունակությունների ձևավորում, մասնագիտական կողմնորոշման ապահովում • Արտադասարանական և համադպրոցական միջոցառումների անցկացում 	<ul style="list-style-type: none"> • Հանրապետական պարբերականներում տպագրված գիտական կամ մեթոդական հոդվածների գրեթե բացակայություն • Էլեկտրոնային հարթակներում ուսումնական նյութերի, պաշարների ստեղծման պասիվություն
<p>4. Սովորողների ուսումնառության և այլ գործունեության վերլուծություն</p>	
<ul style="list-style-type: none"> • Միջինից բարձր առաջադիմությունը • Մասնակցությունը ստեղծագործական և սպորտային մրցույթներին • Ակտիվ մասնակցությունը «Կենգուրու» միջազգային և «Մեդու» հանրապետական մրցույթներին • Անհարգելի բացակայությունների ցածր ցուցանիշը • Ակտիվ մասնակցությունը արտադասարանական միջոցառումներին • Բուհեր, նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու բարձր ցուցանիշը 	<ul style="list-style-type: none"> • Մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում հաղթանակների ցածր ցուցանիշը
<p>5. Համայնքի հետ համագործակցության, կրթության կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության վերլուծություն</p>	
<ul style="list-style-type: none"> • Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին 	<ul style="list-style-type: none"> • Համագործակցության, նախաձեռնությունների պասիվություն վերջին երկու

<ul style="list-style-type: none"> • ԾԽ-ի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցական աշխատանքներում • ԾԽ և ԱԽ ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում • Հաստատության գործունեության թափանցիկություն • Ծնողական խորհրդի համագործակցություն համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ • Կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների դպրոցամետ գործունեություն՝ ըստ կարգով վերապահված գործառույթների • Ժողովրդական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործունեություն • Ամենամյա եռակողմ նիստ, որտեղ ներկայացվում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն, ակտիվ ուսուցիչները, ծնողները և աշակերտներն էլ արժանանում են տնօրենի խրախուսանքին /պատվոգիր, շնորհակալագիր/: 	<p>տարում պայմանավորված համավարակով</p>
<p>6.Ռեսուրսներով ապահովվածությունը</p>	
<ul style="list-style-type: none"> • Հմուտ և որակյալ կադրեր • Աշխարհագրության վերաբերյալ ուսումնական նյութեր • Ֆիզիկայի , քիմիայի և կենսաբանության 	<ul style="list-style-type: none"> • Նոր սերնդի էլեկտրոնային գրատախտակներ և պրոյեկտորներ • Նոր գույքի ձեռքբերում • Հանդիսությունների դահլիճի

<p>լաբորատորիաներ՝ ոչ բավարար սարքավորումներով և ուսումնական նյութերով</p> <ul style="list-style-type: none"> • Համակարգչային ոչ բավարար տեխնիկա 	<p>հարդարում</p> <ul style="list-style-type: none"> • Համակարգչային սենյակի կահավորում և նոր գույքի ձեռքբերում • Գրադարանի կահավորում • Ֆիզիկայի , քիմիայի և կենսաբանության լաբորատորիաների համալրում ժամանակակից ուսումնական նյութերով և սարքավորումներով.
<p>7. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները</p>	
<ul style="list-style-type: none"> • Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում դասապրոցեսում • Հեռավար կրթական հարթակի կիրառում • Հեռավար դասերի վարում • Նախագծային աշխատանքների կազմակերպում • Շրջված դասարան մոդելի կիրառում 	<ul style="list-style-type: none"> • Ուսուցանող գնահատման ներդրում • Դրամաշնորհային ծրագրեր
<p>8. Հաղորդակցության, համագործակցություն</p>	

<ul style="list-style-type: none"> • Համագործակցություն ՀՀ բուհերի և քոլեջների հետ՝ ԵՊՀ, ԳՊՀ, ԳԲՔ, ԳԳՔ: • Համագործակցություն մի շարք կազմակերպությունների և կառույցների հետ՝ սովորողի սոցիալիզացիային նպաստելու, քաղաքացիական գիտակցություն ձևավորելու նպատակով. <ul style="list-style-type: none"> ➤ Գավառի «Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ» , ❖ Հայկական Կարիտաս հասարակական և «Վորլդ Վիժն Հայաստան» Ջարգացման Եվ Բարեգործական Միջազգային Կազմակերպություն /Գավառ/ 	<ul style="list-style-type: none"> • Միջազգային բուհերի և կառույցների հետ համագործակցության բացակայություն
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------

3. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերոնշյալ խնդիրները իրականացվելու են հետևյալ սկզբունքներով

- ժողովրդավարություն
- մարդասիրություն
- համագործակցություն
- համակարգվածություն
- ներդաշնակություն
- թափանցիկություն
- քաղաքացիական գիտակցություն
- ստեղծագործելու ընդունակություն

Դպրոցի

զարգացման

հիմնախնդիրները

I աստիճան

Տարրական

դպրոց

II

աստիճան

Հիմնական

դպրոց

III

աստիճան

Ավագ

դպրոց

Կրթական աստիճան	Խնդիրներ
<p>I աստիճան Տարրական դպրոց /6-9տարեկան/ I-IV դասարաններ Զարգացող դպրոց</p>	<ol style="list-style-type: none"> 1. Երեխաների ֆիզիկական, մտավոր, հոգեբանական և ինտելեկտուալ զարգացման մոնիթորինգ: 2. Տրամաբանական և աշխարհաճանաչողական ունակությունների զարգացման նպատակով հատուկ դասընթացների և արտադասարանական միջոցառումների կազմակերպում: 3. Ուսման հանդեպ դրական մոտեցումների ձևավորում և զարգացում: 4. Հետագա՝ հիմնական դպրոցում, կրթության համար անհրաժեշտ գիտելիքների, կարողունակությունների և հմտությունների ձեռքբերում, զարգացում:
<p>II աստիճան Հիմնական դպրոց /10-14տարեկան/ V-IX դասարաններ Ինքնորոշման դպրոց</p>	<ol style="list-style-type: none"> 1. Տեսական մտածողության զարգացման հիմունքներ, հետազոտական գործունեության ձևավորում: 2. Աշակերտների անհատական զարգացման, նրանց հետագա մասնագիտական կողմնորոշման համար պայմանների ստեղծում: 3. Մշակութային շփումներ և դրանց զարգացման ու ձևավորման միջոցառումներ: 4. Արտադասարանական գործունեության զարգացման համար պայմանների բարելավում: 5. Անհատի բարոյական հիմունքների ձևավորում: 6. Առողջ ապրելակերպի հիմունքների ձևավորում:
<p>III աստիճան Ավագ դպրոց /15-17տարեկան/ X-XII դասարաններ Ինքնահաստատման դպրոց</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ավագ դպրոցում գիտահետազոտական գործունեություն ծավալելու կարողունակությունների մշակում: 2. Աշխարհընկալման և ազգային գաղափարախոսության ձևավորում: 3. Սոցիալական ակտիվ գործունեության հիմունքների ձևավորում, հասարակության մեջ իր տեղի, դերի կողմնորոշում: 4. Առողջ ապրելակերպի հիմունքների տիրապետում:

3.1.ԴՊՐՈՑԻ ՊԱՏԿԵՐԱՆԻՇ և ՆՇԱՆԱԲԱՆ

Հիմք ընդունելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս հիմնասյուները՝

- Սովորել իմանալու համար
- Սովորել իրականացնելու համար
- Սովորել լինելու համար
- Սովորել միասին ապրելու համար

Առաջարկում եմ մեր դպրոցի համար սահմանել հետևյալ նշանաբանը՝

« ՍՈՎՈՐԵԼ

ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ

ՀԱՄԱՐ»...

Առաջարկում եմ նաև ունենալ մեր դպրոցի ամբողջական անվանումն արտահայտող ինքնօրինակ ուրվագծով պատկերանիշ (լոգո),ինչպես նաև դրոշ :Այս հարցի շուրջ կազմակերպել աշակերտական խորհրդի և մանկավարժական

խորհրդի լսումներ, հաշվի առնել առաջարկությունները:

4. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ՝ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՑՈՒՐԱՔԱՆՉՑՈՒՐ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ոլորտ	Խնդիր
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր , ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով:
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	Շրջանավարտների և հոգաբարձուների խորհրդի ստեղծում
	Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև սերտ համագործակցության ամրապնդում
Մանկավարժական համակազմ	Մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում Հերթական և կամավոր ատեստավորումներին ուսուցիչների մասնակցության խթանում: Որակավորման տարակարգ ստանալու գործընթացին աջակցում:
Աշակերտական համակազմ	Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում
	Համագործակցությունների շրջանակի ընդլայնում
	Սոցիալ-մշակութային դպրոցի կայացում
Ուսումնական միջավայր	Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում:
Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում
	Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում

<p>Տեխնոլոգիաներ և նորարարություն</p>	<p>Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում Մենթորական համակարգի ներդրում</p>
<p>Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր</p>	<p>Ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս</p>

5.ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈԼՈՐՏԻ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ,

6.ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1

Ոլորտը՝ Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան
 Նպատակը՝ Բարելավել պայմանները, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստելու կրթության որակի բարելավմանը
 Խնդիրը՝ Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր , ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով:

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսը
1	2	3	4
2-րդ մասնաշենքի պատուհանների վերանորոգում	Տնօրեն, համակարգող	2023-2024	Դրամաշնորհային ծրագրեր, պետական բյուջե

Դասասենյակների համալրում նոր գույքով	Տնօրեն, հաշվապահ, գնումների համակարգող, համակարգող ֆինանսական տնտեսական	մինչև 2023	Դրամաշնորհային ծրագրեր, պետական բյուջե	
Համակարգչային լսարանի կահավորում		2024-2026	Պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ, հովանավորչական միջոցներ	
Համակարգչային տեխնիկայի, էլեկտրոնային գրատախտակների համալրում նոր սերնդի տեխնիկայով		մինչև 12/2023	Դրամաշնորհային ծրագրեր, պետական բյուջե	
Դպրոցի հանդիսությունների դահլիճի հարդարում		2023-2025	Պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ, հովանավորչական միջոցներ	
Կահավորել աշակերտական խորհրդի սենյակը		2023-2025		
Կահավորել ժամանակակից գրադարան /նաև առցանց/ և ընթերցասրահ				
Մարզագույքի համալրում				
Գրադարանին և ընթերցասրահին կից ստեղծել համակարգիչներով կահավորված լսարան, որտեղ տեղադրված համակարգիչներից դասերից հետո կօգտվեն այն սովորողներն ու ուսուցիչները, որոնք տանը չունեն համակարգչով աշխատելու հնարավորություն:				
Բակի ամբողջական ասֆալտապատում			2023-2026	Դրամաշնորհային

	Տնօրեն, հաշվապահ, գնումների համակարգող, համակարգող ֆինանսական նտեսական	2023-2026	ծրագրերից, պետական բյուջե
Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաների համար ուսումնական նյութերի և սարքավորումների ձեռքբերում			Պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ, հովանավորչական միջոցներ

Ռիսկերը

- ✓ Աշակերտ թվի նախատեսվածից քիչ աճը
- ✓ Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը
- ✓ Համավարակով պայմանավորված ոչ կայուն իրավիճակը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- ✓ Դպրոցի առօրյայի, ձեռքբերումների, սովորողների հանգստի ու ժամանցի լուսաբանումը դպրոցի կայքէջերում և դպրոցի թափանցիկ գործունեությունը՝ որպես ընդունելության խթանման միջոց
- ✓ Համագործակցություն համայնքի դպրոցների և մանկապարտեզների հետ
- ✓ Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցներ ձևավորող ծրագրերը իրականացնելու համար

2

Ոլորտը՝ Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Նպատակը՝ Ֆինանսական միջոցների աճ

Խնդիրը՝ Աշակերտ թվի ավելացման միջոցով դպրոցի բյուջեի աճ, արտաբյուջետային միջոցների ձևավորում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսը
1	2	3	4
Դպրոցի գործունեության, ակտիվ և հագեցած առօրյայի լուսաբանում, համագործակցություն համայնքի դպրոցների, մանկապարտեզների և Գավառի պետական համալսարանի հետ	Տնօրենություն, մանկավարժական համակազմ	2023-2028	

Ռիսկերը

- ✓ Աշակերտ թվի նախատեսվածից քիչ աճը և ոչ բավարար տնտեսումները
- ✓ Համայնքում գործող իրավաբանական անձանց հետ համագործակցություն ձեռք չբերելը
- ✓ Համավարակով պայմանավորված ոչ կայուն իրավիճակը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- ✓ Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը
- ✓ Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերը իրականացնելու համար

3

Ոլորտը՝ Կառավարման և խորհրդակցական մարմիններ
 Նպատակը՝ Խորհրդակցական մարմինների ընդլայնում, նրանց միջև համագործակցությունը և դպրոց-համայնք կապը
 խթանելու նպատակով

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսը
1	2	3	4
Շարունակել սերտ համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ, ապահովել նաև այդ մարմինների փոխհամագործակցությունը	Տնօրենություն, ԴԱԿ, դասուղեկներ	2023-2028	
Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովմանը	Տնօրեն	2023-2028	
Ստեղծել շրջանավարտների խորհուրդ Ձևավորել հոգաբարձուների խորհուրդ	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, Կառավարման խորհուրդ	2023-2024	

Ռիսկերը

- ✓ Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազումը
- ✓ Շահագրգիռ կողմերի հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակասը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- ✓ Հակահամաճարակային կանոնների պահպանում
- ✓ Հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում

Ոլորտը՝ Մանկավարժական համակազմը
 Նպատակը՝ Համակազմի մասնագիտական և դասավանդմանորակների արդիականացում և բարելավում՝
 նպաստելու ուսուցման որակի բարելավմանը
 Խնդիրը՝ Համակազմի մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում, մասնագիտական վերապատրաստումների և կամավոր ատեստավորման մասնակցության խթանում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսը
1	2	3	4
Վերապատրաստումներ, ատեստացիաներ, կամավոր ատեստավորումներ, որակավորման տարակարգ ստանալու գործընթացի խթանում	Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ԿԶՆԱԿ	2023-2028	Պետական բյուջե
Մեմինարներ, վեբինարներ, ինքնակրթության, ինքնավերլուծության խթանում, դասավանդման մասնագիտական որակների արդիականացում, մանկավարժների ստեղծագործական նախաձեռնությունների խրախուսում	Տնօրեն, տնօրենի տեղակալ՝ ուսումնական աշխատանքի գծով, մեթոդիկավորման նախագահներ	2023-2028	
Ուսուցիչների առաջավոր փորձի տարածում, մեթոդական աջակցություն սկսնակ ուսուցիչներին			
Ներդպրոցական վերահսկողություն	Տնօրենություն	2023-2028	

Ռիսկերը

- ✓ Համավարակով պայմանավորված խնդիրներ
- ✓ Ուսուցիչների պասիվությունը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- ✓ Հակահամաճարակային կանոնների պահպանում
- ✓ Նպաստել ուսուցիչների մասնակցությանը վերապատրաստումներին, ատեստացիաներին, ինքնակրթությամբ զբաղվելուն և որակավորման աստիճանի բարձրացմանն ուղղությամբ տարվող աշխատանքներին

Ոլորտը՝ Աշակերտական համակազմը
 Նպատակը՝ Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում
 Խնդիրը՝

- Սովորողների մոտիվացիայի խթանում
- Ուսումնառության որակի բարելավում
- Աշակերտական ինքնավարության խթանում
- Արժեհամակարգի ձևավորում
- Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ, համագործակցությունների շրջանակների լայնացում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսը
1	2	3	4
Հրապուրիչ կրթական միջավայրի ստեղծում/ տես նպատակ 1/	Տնօրենություն	2023-2028	Պետական բյուջե
Մշտադիտարկումներ, կրթական կարիքի գնահատում և սովորողների ուսուցման անհատական մոտեցումների կիրառում դասապրոցեսում	Տնօրեն, տնօրենի տեղակալ՝ ուսումնական աշխատանքի գծով, մեթոդիավորման նախագահներ	2023-2028	
Աշակերտական խորհրդի սենյակի ձևավորում /տես նպատակ 1/, աջակցություն աշակերտական խորհրդի նախաձեռնություններին	Տնօրենություն, մանկավարժական համակազմ	2023-2028	

<p>Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ՝</p> <ul style="list-style-type: none"> ○ նախասիրությունների բացահայտմանն ուղղված թեստեր ○ մասնագիտությունների և մարդու բնույթի համապատասխանությունը ախտորոշող թեստեր ○ մասնագիտությունների վերաբերյալ ֆիլմերի դիտում ○ ճանաչողական այցեր, հանդիպումներ ○ աշխատաշուկայի ներկայացում, վերլուծություն 	<p>ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ, դասադեկների մանկավարժական համակազմ</p>	<p>2023-2028</p>	
<p>Դպրոցն ավարտած շրջանավարտների հաջողությունների լուսաբանում</p>	<p>ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ,</p>	<p>2023-2028</p>	

- Ռիսկերը
- ✓ Համավարակով պայմանավորված սահմանափակումները, առկա շփումների նվազումը
- Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները
- ✓ Հակահամաճարակային կանոնների պահպանում
 - ✓ Առկա և հեռավար շփումների խթանում

6

Ոլորտը՝ Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Նպատակը՝ Կոմպետենտ (կարողունակ) և հասարակական կյանքին ինտեգրված քաղաքացիների ձևավորում

- ✓ Խնդիրը՝ Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում
- ✓ Համագործակցությունների շրջանակի ընդլայնում
- ✓ Սոցիալ-մշակութային դպրոցի կայացում:

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսը
1	2	3	4
<p>Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում սովորողների և ծնողների մասնակցությամբ.</p> <ul style="list-style-type: none"> ○ Շաբաթօրյակ, ծառատունկ ○ Հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների հետ՝ «Հաջողված կարիերա» ծրագրի շրջանակներում ○ Համայնքի ներկայացուցիչների և ծնողների մասնակցությամբ տարաբնույթ միջոցառումների կազմակերպում 	<p>Տնօրենություն, ԴԱԿ, ԱԽ, ԾԽ</p>	<p>2023-2024</p>	<p>Ձեռնարկատիրական նախաձեռնություններ</p>

Մոցիալ-մշակութային դպրոցի հիմնում`

- Զարգացնել սպորտային, մշակութային ակումբների գործունեությունը
- Անցկացնել ստեղծագործական շարադրությունների մրցույթներ
- Կազմակերպել նկարչական մրցույթներ և Բարեգործական ցուցահանդեսներ` համայնքի և ծնողների ներգրավմամբ, և հասույթն ուղղել բարեգործական նպատակների
- Կազմակերպել համերգներ դպրոցում շնորհալի աշակերտների միջոցով, մշակութային ծրագրերով հանդես գալ համայնքում

Ռիսկերը

- ✓ Համայնքի պասիվությունը
- ✓ Համավարակով պայմանավորված սահմանափակումները, առկա շփումների նվազումը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- ✓ Իրազեկել համայնքին, ապահովել ակտիվ ներգրավվածությունը, կարևորել դպրոց-համայնք կապը
- ✓ Հակահամաճարակային կանոնների պահպանում

7

Ոլորտը` Ուսումնական միջավայր

Նպատակը` Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման միջոցով նպաստել ուսման որակի բարելավմանը

Խնդիրը` Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում:

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսը
1	2	3	4
Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում	Տնօրենություն, դասղեկներ, քաղաքաշտպանության շտաբի պետ	2023-2028	Պետական բյուջե

Լաբորատորիաների, առարկայական կաբինետների գույքի համալրում, արդիականացում	Տնօրեն, Համակարգող	2023-2028	
Դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդնում դասապրոցեսում	Տնօրենություն	2023-2028	

Ռիսկերը

- ✓ Ոչ բավարար ֆինանսական միջոցները

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- ✓ Տնանսական միջոցների արդյունավետ կառավարում

8

Ոլորտը՝ Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Նպատակը՝ Կրթության որակի բարելավում, չափորոշով սահմանված վերջնարդյունքների ապահովում , աշխատանք օժտված երեխաների հետ

Խնդիրը՝

- ✓ Վերջնարդյունքների գնահատում. մնացորդային գիտելիքի ստուգում
- ✓ Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսը
1	2	3	4
<ul style="list-style-type: none"> ○ Մշտադիտարկումներ՝ վերջնարդյունքների ապահովման դիտարկում ○ Հայտորոշիչ աշխատանքներ ○ Հարցախույզներ՝ կրթական կարիքի գնահատման համար 	<p>Տնօրենություն, մեթոդափնտրման նախագահներ</p>	<p>2023-2028</p>	
<ul style="list-style-type: none"> ○ Անհատական աշխատանք առարկայական օլիմպիադաների մասնակից սովորողների հետ ○ Աշխատանքային միջավայրի տրամադրում/ համակարգչային լսարան, գրադարան/ Առարկայական մրցույթների, բանավեճերի, քննարկումների անցկացում 			

Ռիսկերը

- ✓ Համավարակով պայմանավորված սահմանափակումները
- ✓ Ծրագրված միջոցառումների հեռավար անցկացման խոչընդոտներ/ տեխնիկական միջոցներ, հարթակներից և ռեսուրսներից օգտվելու հմտություններ/

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- ✓ Հակահամաճարակային կանոնների պահպանում
- ✓ Հեռավար հարթակներից և էլեկտրոնային կրթական ռեսուրսներից օգտվելու կարողությունների և հմտությունների զարգացում

9

Ոլորտը՝ Տեխնոլոգիաները և նորարարությունը

Նպատակը՝ Կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում

Խնդիրը՝ Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում:

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսը
1	2	3	4
Համակարգչային լսարանի կահավորում, ռեսուրսների համալրում, ժամանակակից գրականության ձեռքբերում, Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում /ուսուցիչների ինքնակրթություն, սեմինարներ, վեբինարներ/	Տնօրենություն, համակարգող, մեթոդախմբի անդամներ	2023-2028	Պետական բյուջե, արտաբյուջետային 64

Մենթորական համակարգի ներդրում			միջոցներ
Էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում, ստեղծում			
Նոր սերնդի համակարգչային տեխնիկայի ձեռքբերում	Տնօրեն	2024-2027	
Լաբորատոր սարքերի և սարքավորումների, ուսումնական նյութերի համալրում, արդիականացում		2024-2027	
Մեղիագրագիտության վերաբերյալ սեմինարներ, քննարկումներ	Տնօրենություն, մանկավարժական համակազմ	2023-2028	

Ռիսկերը

- ✓ Ոչ բավարար ֆինանսական միջոցները
- ✓ Ուսուցիչների պասիվությունը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- ✓ Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում
- ✓ Մոտիվացնել, խրախուսել ուսուցիչներին

10

Ոլորտը՝ Դպրոցի գործունեությունը կանոնակարգող հրավական ակտեր

Նպատակը՝ Ուսուցիչներին իրազեկել դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին և դարձնել մասնակից դրանցում կատարվող փոփոխություններին

Խնդիրը՝

- ✓ Ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսը
1	2	3	4
Իրավական ակտերի լուսաբանում e-draft.am կայքի ներկայացում, հանրային քննարկման դրված ակտերի ներկայացում	Տնօրենություն, մեթոդախաղարման նախագահներ	2021-2026	

Ռիսկերը՝ Ուսուցիչների պասիվությունը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝
 Ուսուցիչների մասնակցության խթանում, մոտիվացիայի բարձրացում

8. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հրապուրիչ և որակյալ կրթական
միջավայր

Վերանորոգված և
նյութատեխնիկական
բազայով հագեցած
առաջադեմ դպրոց

Փորձառու և ճանաչված
մասնագետներ, նորարար և
ստեղծագործ ուսուցիչներ

Սոցիալ-մշակութային
կենտրոն հանդիսացող
դպրոց

Ժողովրդավարական
սկզբունքների
համապատասխան ԱԽ և ԾԽ
գործունեություն

SZS միջոցների
լիարժեք ներդրում
և կիրառում
դասապրոցեսում

Աշակերտ թվի
ավելացում

Սովորողների բարձր
ցուցանիշներ
առարկայական
օլիմպիադաներում

Ապագա մասնագիտության
ճիշտ կողմնորոշում և
ընտրություն

21-րդ դարի կարողունակ և մրցունակ
քաղաքացի

9. ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Դպրոցի կառավարման խորհուրդը (ԿԽ):

Դպրոցի առաքելությունը և Ծրագիրը ենթակա են փոփոխությունների՝ ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ, ներքին կամ արտաքին գործոնների օբյեկտիվ ազդեցությունների դեպքում, ինչպես նաև ժամկետից շուտ առանձին գործառույթներ իրականացվելուց հետո:

Ծրագրի կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունն ամեն տարի ներկայացվում է կառավարման և խորհրդակցական մարմիններին՝ տարեկան երկու անգամ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:

Գնահատման ուրբիկ

Գնահատման չափանիշը	Գնահատականը		
	բավարար	լավ	գերազանց
Նախատեսված աշխատանքները կատարվել են մասամբ	V		
Նախատեսված աշխատանքները հիմնականում կատարվել են		V	
Նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով			V

10. ԵԶՐԱՓՈՒՄ

2023-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: Այն ապահովելու է 2018-2023 թվականներին կատարված աշխատանքների տրամաբանական շարունակությունը: Նախատեսված աշխատանքների համար կան արդեն ձևավորված ամուր հիմքեր: